



Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

Շաբաթական Չեկույց

17 դեկտեմբեր 2012

*Հասկանալ ֆինանսական շուկաները,
տեղեկատվությունը և վերլուծությունները
գիտակցված ներդրումների նպատակով*



Ձեզ են ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների շարքի առաջին հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսական ու տնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, բայց նաև անդրադառնալով համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ասիայում:

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- Ամերիկյան ներդրողները մտահոգված էին, քանզի բաժնետոմսերը ամսվա ընթացքում առաջին շաբաթական անկումը գրանցեցին շարունակվող բյուջետային բանակցությունների պատճառով: Այնուամենայնիվ առկա էին նաև ոգևորիչ նշաններ, քանզի նոյեմբերին ինչպես վաճառքները, այնպես էլ արդյունաբերական արտադրանքը վերականգնվեցին, և գործազրկության դիմումները նվազեցին մինչև 9 շաբաթյա նվազագույն մակարդակները: Արդյունաբերական արտադրանքը աճեց

երկու տարվա ընթացքում ամենամեծ ծավալով` արտացոլելով վերականգնումը արդյունաբերական ոլորտում, ինչպես նաև բարելավումը տների շուկայում և մեքենաների վաճառքներում: ԱՄՆ-ի Դաշնային Պահուստային Բանկը հայտարարեց պարտատոմսերի գնման չորրորդ ռաունդի մեկնարկի մասին: օրենքի նոր նախագիծը` Ռուսաստանի և Մոլդովայի հետ հաստատելով մշտական նորմալ առևտրային հարաբերություններ:


- Համաձայն Եվրոպական Կոնտրոնական Բանկի` ԵԿԲ-ի Ֆինանսական Կայունության զեյունցին` Եվրոգոնայի ֆինանսական կայությունը դեռևս կանգնած է «սթրեսի և ռիսկայնության» առջև, թեպետ վերջին 6 ամսիների ընթացքում լարվածությունը մեղմացել է: Եվրոպական առնվազն 150 բանկեր կլինեն Եվրոպական Կոնտրոնական Բանկի անմիջական վերահսկողության տակ, Գերմանական գործարար վստահությունը բարելավվեց երկրորդ ամիսն անընդմեջ` թեթևացնելով վախերը հնարավոր գերմանական ճգնաժամի վերաբերյալ: Եվրոպական շուկաները հանգստացան Հունաստանին երկար սպասված օգնության փաթեթը տրամադրելուց հետո:
- Ասիական բաժնետոմսերը աճեցին չորրորդ շաբաթն անընդմեջ, քանզի ճապոնական արտահանման ծավալները ընդլայնվեցին: Չինական արտադրանքը ևս աճ գրանցեց, թեպետ ավելի լայն դանդաղում նկատվեց արտահանման ծավալներում: Չինաստանը նույնպես շարժվեց դեպի կապիտալի շուկայի խորացում:
- Արժույթի միջազգային հիմնադրամը Հայաստանին 51 միլիոն դոլար նոր վարկ տրամադրեց: Մաքսային տվյալները ահագնացնում են մտահոգությունները այն մասին, որ ռուսական գազի գները կթանկանան` ի հեճուկս կառավարության փաստարկներին:

Ամերիկյան շուկաները մտահոգված են մոտեցող բյուջետային անդունդի վերաբերյալ`

Ամերիկյան ներդրողները մտահոգված էին, քանզի ***բաժնետոմսերը ամսվա ընթացքում առաջին շաբաթական անկումը գրանցեցին*** աճող անորոշության պատճառով: Բյուջետային բանակցությունների վերաբերյալ քաղաքական հակամարտությունը ահագնացավ, որի նպատակն է լուծում տալ մոտեցող «բյուջետային անդունդին» կամ հունվարի մեկնական վերջնաժամկետը, երբ Կոնգրեսի կողմից քայլեր չձեռնարկելու դեպքում կգործարկվի ծախսերի կրճատման և հարկերի ավելացման 600 միլիարդ դոլար խնայող ծրագիրը:

Այնուամենայնիվ ***առկա էին նաև ոգևորիչ նշաններ***, քանզի նոյեմբերին ինչպես վաճառքները, այնպես էլ ***արդյունաբերական արտադրանքը վերականգնվեցին***, և գործազրկության դիմումները նվազեցին մինչև 9 շաբաթյա նվազագույն մակարդակները: Նոյեմբերին

արդյունաբերական արտադրանքը աճեց երկու տարվա ընթացքում ամենամեծ ծավալով՝ արտացոլելով վերականգնումը արդյունաբերական ոլորտում, ինչպես նաև բարելավումը տների շուկայում և մեքենաների վաճառքներում: Հատկանշական է, որ արտադրողներից շատերը ծրագրել ավելի շատ ներդրումներ անել հաջորդ տարի, և կապիտալ սարքավորումների պատվերները՝ չհաշված պաշտպանությունն ու ինքնաթիռները, հոկտեմբերին աճեց 2,9 տոկոսով, որը փետրվար ամսից ամենամեծ աճն է հանդիսանում: ԱՄՆ-ի աշխատաշուկան ևս վերականգնման նշաններ ցուցադրեց, քանզի նոր աշխատատեղերի համար մրցակցությունը բարելավվեց (ստորև տե՛ս գրաֆիկը):



Source : FactSet/Labor Department

Ավելացնելով շուկայական լավատեսություն՝ ԱՄՆ-ի Դաշնային Պահուստային Բանկը հայտարարեց **պարտատոմսերի գնման** չորրորդ ռաունդի մեկնարկի մասին: Հունվարից սկսած ամեն ամիս տնտեսական աճը խթանելու նպատակով ԴՊԲ-ն կգնի 45 միլիարդ դոլար ծավալով պարտատոմսեր: Վերջինս կապիտալի գնման ծրագիր է հանդիսանում՝ որպես հավելում համանման՝ ամեսական 40 միլիարդ դոլար ծավալով հիփաթեքային պարտքի գնումներին: Դաշնային Պահուստային համակարգը հաստատեց նաև, որ տոկոսադրույքը կմնա ցածր առնվազն այնքան ժամանակ, որքան որ գործազրկության մակարդակը շարունակի մնալ 6,5 տոկոսից բարձր և կանխատեսվող ինֆլյացիան չգերազանցի 2,5 տոկոսը: Այնուամենայնիվ, այս քայլը խթանեց նաև պետական պարտատոմսերի անկումը երկրորդ շաբաթն անընդմեջ՝ հանգեցնելով երեք ամիսների ընթացքում անընդմեջ անկումը, քանզի պարտատոմսերի գնման ծրագիրը սպեկուլյացիաների պատճառ

հանդիսացավ աճող ինֆլյացիայի վերաբերյալ: Անկումը մասնակիորեն չեզոքացվեց շաբաթվա ավարտի առևտրի ընթացքում, այնուամենայնիվ, 30-ամյա և հենասյուն հանդիսացող 10-ամյա պարտատոմսերի շահութաբերությունը աճեց՝ հետևելով CPI սպառողական գների ինդեքսի նվազմանը, որը 2012թ. մայիսից առաջին 0,3 տոկոսանիցանկումը գրանցեց:

Մեկ այլ կարևոր զարգացում անցած շաբաթ եղավ այն, որ ԱՄՆ-ի Դաշնային Պահուստային Համակարգը առնվազն 50 միլիարդ դոլար համաշխարհային կապիտալ ունեցող մոտ 24 օտարերկրյա բանկերի համար նոր, **ավելի կոշտ կապիտալի պահանջներ ընդունեց**: Այս քայլով, որը ուղղված էր ռիսկերի նվազմանը, ավելի կոշտ կանոնները կպահանջեն, որ խոշոր օտարերկրյա բանկերը «սթրես թեստեր» անցնեն, որոնց նպատակն է գնահատել, թե ինչպես կարող են բանկերը դիմակայել մեկ այլ տնտեսական լուրջ ճգնաժամի: Թեպետ այս նոր պահանջներից շատերը ուժ չեն ստանա մինչև 2015թ. հուլիսը, այս քայլը արտացոլում է ֆինանսական ճգնաժամի ընթացքում արտակարգ վարկերի տեսքով ԱՄՆ-ի Դաշնային Պահուստային Բանկի կողմից եվրոպական խոշոր բանկերի ամերիկյան մասնաճյուղերին տրամադրած 538 միլիարդ դոլարի մտահոգությունը: Գումարային այս ծավալը գրեթե հավասարազոր է ամերիկյան ներքին բանկերին տրված օգնությանը: Կապիտալին վերաբերող այս նոր կանոնները կվերաբերեն այն բանկերին, որոնք ունեն 50 միլիարդ դոլարի համաշխարհային ակտիվներ, և ավելի քան 10 միլիարդ դոլար Միացյալ Նահանգներում, և կպահանջեն փոխանցել նրանց ամերիկյան բիզնեսները, ներառյալ արժեթղթերի առևտրով զբաղվող բաժինները կարգավորվող հոլդինգային ընկերություններին:

Առևտրի հետ կապված իր քայլով ԱՄՆ նախագահ Բարակ Օբաման ստորագրեց օրենքի նոր նախագիծը՝ **Ռուսաստանի և Մոլդովայի հետ հաստատելով մշտական նորմալ առևտրային հարաբերություններ**, որը սակայն կարող է ռուս պաշտոնյաների հանդեպ անհատական պատժամիջոցների խթան հանդիսանալ՝ այն պաշտոնյաների, որոնք կապ ունեն իրավաբան Սերգեյ Մազնիցկու մահվան և մարդու իրավունքների այլ ռոտահարումների հետ: Այս նոր օրենքը մշտապես **կազատի Ռուսաստանին Սառը պատերազմի ժամանակաշրջանի առևտրային արգելքներից**, քանզի Միացյալ Նահանգները ջանում են ընդլայնել առևտուրը Ռուսաստանի հետ, հատկապես այն բանից հետո, երբ Մոսկվան անցած Օգոստոսին միացավ Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը (WTO):

Ավելի մեծ վստահություն Եվրոպայում՝

Համաձայն Եվրոպական Կոնտրոնական Բանկի՝ ԵԿԲ-ի **Ֆինանսական Կայունության զեյունցին՝ Եվրոզոնայի ֆինանսական կայությունը դեռևս կանգնած է «սթրեսի և ռիսկայնության» առջև**, թեպետ վերջին 6 ամսիների ընթացքում լարվածությունը մեղմացել է: Այս գնահատականը հիմնականում հաստատվեց հունիսի նվազագույն մակարդակներից մոտ 20 տոկոսով եվրոպական բաժնետոմսերի համընդհանուր վերականգմամբ, և ծառայությունները և արդյունաբերական արտադրանքը դեկտեմբերին ավելի քիչ անկում

գրանցեցին, քան ակնկալվում էր: Վստահությունը ամրապնդվեց նաև եվրոպական առաջնորդների որոշման հետևանքով, որոնք լիազորեցին ԵԿԲ-ին վերահսկել բանկային հատվածը Միասնական Վերահսկող Մեխանիզմի (SSM) միջոցով, ինչը կգործարկվի 2014թ. մարտին: Համաձայն նոր պայմանագրի կետերին՝ եվրոպական առնվազն 150 բանկեր կլինեն Եվրոպական Կենտրոնական Բանկի անմիջական վերահսկողության տակ, որը կունենա ավելի լայն լիազորություններ՝ ներառյալ բանկային լիցենզավորման գործընթացի և ինստիտուտների վերահսկումը, ինչպես նաև այն բանկերի սուզանումը, որոնք կխախտեն ավելի կոշտ կանոնները:

Թեպետ եվրոգոնայի բոլոր խնդիրները չեն լուծվել, մարտահրավերների ծավալը կարծես փոքրանում է, քանզի արդյունաբերական արտադրանքը ավելի քիչ ծավալներով է նվազում, քան ակնկալվում էր: Գերմանական գործարար վստահությունը բարելավվեց երկրորդ ամիսն անընդմեջ՝ թեթևացնելով վախերը հնարավոր գերմանական ճգնաժամի վերաբերյալ:



Source : FactSet/Eurostat/Markit

Եվրոպական շուկաները ևս հանգստացան այն բանից հետո, երբ ԵՄ ֆինանսների նախարարները հաստատեցին Հունաստանին երկար սպասված 49,1 միլիարդ եվրո (\$64 միլիարդ) ծավալով ֆինանսական օգնության տրամադրումը: Առաջին 34,3 միլիարդ ծավալի փաթեթը տրամադրվեց, իսկ 2013թ. առաջին քառորդում կհատկացվի նաև մնացած մասը: Միաժամանակ Հունաստանի կառավարությունը ընդունեց վարկատուների պահանջները և

նախաձեռնեց մասնավոր սեփականատերերից նումինալ գնի մեկ երրորդով պարտատոմսերի վերագնում 20 միլիարդ եվրոյի ծավալով:

Բրիտանական HSBC բանկը համաձայնեց վճարել 1,9 միլիարդ դոլար ԱՄՆ-ի կողմից առաջ քաշած փողերի լվացման մեղադրանքները չեղյալ ճանաչելու համար: Ըստ մեղադրանքի՝ բանկը միլիարդավոր դոլարների փոխանցումներ է իրականացրել դեպի Իրան՝ ի հեճուկս միջազգային պատժամիջոցների, ինչպես նաև գումարային փոխանցումներ է իրականացրել մեկսիկական թմրանյութերի կարտելներից ամերիկյան ֆինանսական սիստեմի միջոցով գումարները օրինականացնելու նպատակով: Մեղադրանքի հանումը ենթադրում է, որ HSBC-ն 1,2 միլիարդ դոլարից ավել կվճարի պայմանավորվածությունների հետաձգման համար և մոտ 650 միլիոն դոլար որպես տուգանք: HSBC-ի մեղադրանքների հանումը հետևում է նմանատիպ մի գործընթացին Բրիտանիայում գործող մեկ այլ Standard Chartered բանկի օրինակին, որը կվճարի ավելի, քան 300 միլիոն եվրո Իրանի դեմ ամերիկյան պատժամիջոցները խախտելու համար:

Հայացք Ասիային՝

Ասիական բաժնետոմսերը աճեցին չորրորդ շաբաթն անընդմեջ, քանզի ճապոնական արտահաման ծավալները ընդլայնվեցին՝ օգնություն ստանալով թուլացող իենայից, որը նվազեց մինչև 9 ամիսների մինիմումը, հիմնականում դեկտեմբերի 16-ին կայացած խորհրդարանական ընտրություններում ընդդիմության սպասված հաղթանակի շնորհիվ: Չինական արտադրանքը ևս աճ գրանցեց, թեպետ ավելի լայն դանդաղում նկատվեց արտահանման ծավալներում: ***Չինաստանը նույնպես շարժվեց դեպի կապիտալի շուկայի խորացում***, քանզի Չինաստանի արտարժույթի պետական կարգավորիչը բարձրացրեց ներդրումների մակարդակը հարուստ սուվերեն ֆոնդերի և ներքին բաժնետոմսերի կամ պարտատոմսերի մեջ ներդրում անող կենտրոնական բանկերի համար՝ թույլատրելով օտար կառույցներին չինական բաժնետոմսերում և պարտատոմսերում 1 միլիարդ դոլարի ներդրում անելու հնարավորությունը: Փոփոխությունը միանգամից ուժ է ստանում և փորձում է նոր ներդրումներ ստանալ տեղական շուկաներում՝ իրացվելիությունը խթանելու ներդրողների վստահությունը բարձրացնելու նպատակով:

Ապրանքային շուկա. նավթ՝

Ապրանքային շուկայում ***գերիշխում էր կայուն աճը համաշխարհային նավթային գներում***, որը նույններից սկսած աճի հինգերորդ շաբաթն է՝ խթանվելով նավթի համաշխարհային երկու ամենախոշոր սպառողների՝ Չինաստանի և Միացյալ Նահանգների արտադրության ընդլայնումից: Նավթի գների աճը կապված էր չինական սպառման աճի հետ՝ օրեկան 9,9

միլիոն բարել, ինչը օրեկան 115,000 բարելով ավելի է, քան կանխատեսվում էր այս տարվա վերջին երեք ամսիսների համար Էներգիայի Միջազգային գործակալության (IEA) կողմից: Հում նավթի չինական ներմուծումը 6 ամսիների ընթացքում աճել էր բարձրագույն մակարդակին և չինական նավթամշակման գործարանները առաջին անգամ օրեկան 10 միլիոն բարել նավթ մշակեցին: Վերջին միտումը շատ վերլուծաբանների դրդեց կանխատեսել նավթի գների շարունակական աճ՝ մինչև մեկ բարելի դիմաց 95 դոլար 2013թ. ներկայիս բարելի դիմաց մոտ 86 դոլար մակարդակից:

Թեպետ IEA-ը 2012-2013թթ. չորրորդ քառորդի համար ավելացրեց նավթի սպառման իր կանխատեսումները՝ Նավթամթերք արտահանող պետությունների կազմակերպությունը (OPEC) որոշում չի կայացրել փոխել արտադրության իր թիրախը, քանզի OPEC պետությունները ընդհանուր առմամբ նավթի գները էապես բարձր են համարում: OPEC պետությունները արտադրում են համաշխարհային նավթի մոտ 40 տոկոսը, և նրանց պաշտոնական քվոտան մնում է օրեկան 30 միլիոն բարել մակարդակի վրա, որը սակայն վերջիններս այժմ ավելացրեցին օրեկան մեկ բարելով: Ընդհանուր առմամբ կանխատեսվում է, որ 2012թ. ավարտական քառորդի ընթացքում նավթի համաշխարհային սպառումը կկազմի օրեկան 90,5 միլիոն բարել, կամ կոպիտ հաշվարկով մոտ օրեկան մոտ 435,000 բարել ավելի, քան գնահատվում էր: Կանխատեսվում է նաև, որ 2013թ. պահանջարկը կավելանա մոտ օրեկան 856,000 բարելով, ինչը օրեկան 110,000-ով ավելի է, քան նախկին սպասումները:

OPEC-ը, սակայն, գների կայունությունը պահպանելու նպատակով նավթի գները իջեցնելու ճնշման տակ է, քանզի Իրաքը, վերջերս, 1998թ. առաջին անգամ գրանցեց նավթի արտադրության ամենամեծ աճը՝ դառնալով նավթի երկրորդ ամենամեծ մատակարարը OPEC խմբում: Իրաքյան նավթի արտադրությունը այս տարի ընդլայնվեց օրեկան 650,000 բարելով՝ հասնելով 3,35 միլիոնի, որոշ չափով օտար նավթային ընկերությունների տեխնիկական օժանդակության շնորհիվ, որոնց եկամուտի չափերը սահմանափակվում են Իրաքի կառավարության հետ կնքած պայմանագրով, համաձայն որի՝ կլինի եկամուտի ֆիքսված ծավալ արտադրված բարելիս անկախ միջազգային գներից: Իրաքյան արտադրությունը ավելի կընդլայնվի և կարող է հասնել օրեկան 3,7 միլիոն բարել մակարդակին:

Թեպետ Սաուդյան Արաբիան նույնաբերին սահմանափակել էր հում նավթի արտադրությունը մինչև 13 ամսվա նվազագույն մակարդակը, այնուամենայնիվ, Լիբիայում, Նիգերիայում, ինչպես նաև Իրաքում նավթի մատակարարման ավելի մեծ ծավալները կարող են ստիպել OPEC-ին նվազեցնել նավթի արտադրությունը գները ցանկալի մակարդակներում պահելու նպատակով: Սաուդյան Արաբիան հատկապես խոցելի է նավթային գներում ցանկացած անկման հանդեպ, քանզի վերջինս հիմնել է պետական բյուջեն 95 դոլար բարելի դիմաց մակարդակի վրա, որը ավելի քան 10 դոլարով քիչ է, քան ներկայիս գնային մակարդակները: Այդ ընթացքում, Իրանի դեմ միջազգային պատժամիջոցները հանգեցրին, որ Իրանի նավթային արտահանումները՝ նախկինում նավթի երկրորդ խոշորագույն արտադրողը,

կրճատվեն 50 տոկոսով: Նավթի արտադրությունը հոկտեմբերին նվազեց օրեկան 2,65 բարելով, որը 1990թ. փետրվարից նվազագույն մակադակն է հանդիսանում: Իր հերթին Լիբիան ակտիվորեն վերականգնում է նավթային իր արդյունաբերությունը և 2013թ. նավթի արտադրությունը կհասցնի օրեկան 1,7 միլիոն բարելի դեկտեմբերին օրեկան 1,5 միլիոնի համեմատ: Նիգերիան՝ Աֆրիկայի ամենախոշոր նավթարտադրողը, ևս ակնկալում է, որ արտադրանքը 2013թ. առաջին քառորդում կհասնի նորմալ մակարդակների վերջին մի քանի ամիսների անկումից հետո, որը տեղի էր ունեցել ջրհեղեղների, գողությունների, նավթամուղերում առկա ճեղքերի պատճառով, որը ստիպեց մի քանի նավթարտադրող ընկերություններին կանգնեցնել արդյունահանումը՝ ազգային արտադրությունը նվազեցնելով օրեկան 500,000 տոննայով:

Հեռահաղորդակցություն՝

Ի հեճուկս Միացյալ Նահանգների, Միացյալ Թագավորության և այլ պետությունների ընդդիմությանը՝ ***միջազգային հեռահաղորդակցության կանոնները արդիականացնող նոր պայմանագիրը (ITR)*** անցած շաբաթ ընդունվեց Դուբայում գտնվող Միացյալ Ազգերի Կազմակերպության բաժանմունք հանդիսացող Հեռահաղորդակցության միջազգային Միության (ITU) հանդիպման ընթացքում: 1998թ. ընդունված հեռահաղորդակցության կանոնների փոփոխություններին դեմ արտահայտվողները մտահոգված էին ինտերնետի կարգավորման, գաղտնիության և պետական վերահսկողության վրա հնարավոր հետևանքների պատճառով: Որոշ մասնավոր ընկերություններ ևս դեմ էին արտահայտվում նոր պայմանագրին: Google Inc-ը կարծիք հայտնեց, որ այս քայլը միայն կօգնի շատ կառավարությունների, որոնք ջանում են ընդլայնել ինտերնետի վերահսկողությունն ու գրաքննությունը՝ ավելացնելով, որ Google-ը կողմ է ազատ և բաց ինտերնետին: Ընդհանուր առմամբ, ITR –ի նոր պայմանագիրը մեծացրեց հեռահաղորդակցության՝ ներառյալ ինտերնետի միջազգային վերահսկման շրջանակները՝ պետություններին իրավունք տալով միջազգային հեռահաղորդակցության ցանցեր և ծառայություններ, հնարավորություն spam-ը արգելափակելու, ինչպես նաև փոփոխությունների ենթարկել հեռահաղորդակցության ընկերությունների հարկման համակարգը:

Հայաստանյան իրադարձություններ՝

Անցած շաբաթ Արժույթի միջազգային հիմնադրամը Հայաստանին 51 միլիոն դոլար նոր վարկ տրամադրեց սակայն զգուշացրեց նաև հարկահավաքության ոլորտում և բիզնես միջավայրում «ծայրահեղ բարելավումների» անհրաժեշտության մասին: ԱՄՆ-ն նշեց, որ

Հայաստանում բիզնեսով զբաղվելը շարունակում է մնալ «դժվար» երկրիաշխարհաքաղաքական մեկուսացման և փակ սահմանների, կառավարությունում առկա կոռուպցիայի, և կառավարական «պարզ և կանխատեսելի» կարգավորումների բացակայության պատճառով: Թեպետ վարկը հանդիսանում է օգնության ավելի ընդարձակ երեք տարվա 409 միլիոն դոլար ծավալով փաթեթը, որը առաջին անգամ հաստատվեց 2010թ. հունիսին երկրի տնտեսությունը խթանելու նպատակով, ԱՄՆ-ն շարունակում է մտահոգված մնալ «հարկային եկամուտները խթանելու» և «իրավական դաշտը ուժեղացնելու, կառավարումը բարելավելու, և մրցակցությունը ընդլայնելու» կառավարության ձախողման պատճառով: Այս վերջին վարկի հետ միասին Հայաստանը մինչև այժմ ԱՄՆ-ից ստացել է մոտ 352 միլիոն դոլար:

ԱՄՆ-ի փոխտնփրեն Նեմաթ Շաֆիքը բացատրեց, որ վերոնշյալ վարկին պատասկն է խթանել աճը՝ նշելով, որ Հայաստանի տնտեսությունը շարունակաբար վերականգնվել է 2008-09թթ. խորը ռեցեսիայից՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի կոնտեքստում՝ արդեն 2012թ. գրանցելով աճ: Այնուամենայնիվ, Երևանում ԱՄՆ-ի տեղական ներկայացուցիչ Գիլիեռմո Թոլոսան զգուշացրեց, որ Հայաստանը շարունակում է իր համեմատյալներից հետ մնալ հարկային եկամուտ-ՀՆԱ արդյունքով, սակայն գովեց կառավարությանը Տնտեսական մրցակցության և պաշտպանության պետական հանձնաժողովին ավելի շատ լիազորություն տալու համար, թեպետ պետությունը պետք է դեռ արդյունավետ բարեփոխի մաքսային ծառայությունը, որը աղբյուր է հանդիսանում որոշ գործունեության համար, որը կարող է հանգեցնել շուկայի որոշ խաղացողների անարդար առավելությանը:

Այդ ընթացքում Հայաստանի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը անցած շաբաթ հայտարարեց, որ ***Հայաստանի կառավարությունը դեռևս հույս ունի բարեհաջող ավարտել բանակցությունները Ռուսաստանի հետ ռուսական գազի ներկրման գների աճը կանխելու նպատակով:*** Մովսիսյանը բացատրեց, որ ակնկալվում է Գազպրոմի հետ նոր գների վերաբերյալ բանակցությունները տարվա ավարտին կավարտվեն պայմանագրով: Մաքսային տվյալների համաձայն՝ Հայաստանը 2012թ. երրորդ քառորդում ներմուծել է 74,4 միլիոն դոլար պաշտոնական արժեքով 304,6 միլիոն կուբամետր ռուսական գազ՝ արտացոլելով հազար կուբամետրի դիմաց մոտ 244 դոլարի հասնող գնաճ կառավարության հայտարարած հազար կուբամետրի դիմաց 180 դոլարի համեմատ: Հաստատելով, որ գները արդեն աճել են, 2012թ. առաջին կեսի մաքսային տվյալները ցուցադրում են, որ Հայաստանը հազար կուբամետր գազի դիմաց Գազպրոմին վճարել է 220 դոլար: Այս անհամապատասխանությունը որոշ վերլուծաբանների ստիպեց մտածել, որ կառավարությունը գաղտնի կերպով Գազպրոմին է վաճառել Հայ-ռուս Գազարտի բաժնեմասերի իր 20 տոկոսը՝ մինչև 2013թ. փետրվարին կայանալիք նախագահական ընտրությունները մանրածախ գինը սուբսիդավորելու նպատակով:



Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է համարվում խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում: